

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

h/h	Միջոցառման անվանումը	Կատարած աշխատանքները	Ֆինանսական ապահովումը
1	2	3	4
1.	Կազմակերպվել է մշտադիտարկում մարզում հասարակության կյանքի առանցքային ոլորտներում գենդերային հավասարության առաջնության, կանանց քաղաքական և քաղաքացիական ակտիվության վերաբերյալ	Վերլուծվել է մարզի հասարակական-քաղաքական կյանքին կանանց մասնակցության հետ կապված իրավիճակը, մշակվել են երաշխավորություններ, որոնք նպաստել են որոշումների կայացման մարզային բոլոր մակարդակներում կանանց և տղամարդկանց հավասարակշռված մասնակցության ապահովմանը:	ՀՀ պետ բյուջե, օրենքով չարգելված այլ միջոցներ
2	Կազմակերպվել են գործընկերային հարաբերությունների բարելավման մեխանիզմների ներդրմանն ուղղված հանդիպում-քննարկումներ մարզում գործող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ՝ կանանց և տղամարդկանց իրավահավասարության նպատակով	Խորացվել է սոցիալական գործընկերությունը իշխանական կառույցների և քաղաքացիական հասարակության ինստիտուտների միջև՝ գենդերային խտրականության հաղթահարման, գենդերային հավասարության առաջնության և երկրում ժողովրդավարության խորացման համար:	ՀՀ պետ բյուջե, օրենքով չարգելված այլ միջոցներ
3	Իրականացվել են սոցիալական դեպքի վարումներ՝ ուղղված կնոջ կողմից ղեկավարվող կյանքի դժվարին իրավիճակում	Բարձրացվել է կնոջ կողմից ղեկավարվող կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքների սոցիալական պաշտպանվածությունը, Բարելավվել է կին ղեկավար ունեցող	

	հայտնված 58 ընտանիքների սոցիալական պաշտպանությանը, մայրերի սոցիալական վիճակի բարելավմանը	ընտանիքների սոցիալական վիճակը	
4.	Մարզի համայնքներում /ընտրությամբ/ իրականացվել է ընտանեկան խնդիրների մշտադիտարկում	Բացահայտվել են 47 ընտանիքներում կանանց և տղամարդկանց ներդաշնակ հարաբերություններին առնչվող խնդիրներ, մշակվել են դրանց լուծմանն ուղղված առաջարկություններ	ՀՀ պետ բյուջե, օրենքով չարգելված այլ միջոցներ
5.	Կազմակերպվել են մարզային ենթակայության կազմակերպություններում, տեղական ինքնակառավարման մարմիններում (այդ թվում՝ համայնքների ղեկավարների աշխատակազմերում) կանանց և տղամարդկանց իրավահավասարության քաղաքականության վերաբերյալ իրազեկման հանդիպումներ	5.1 Կազմակերպվել է «Կանանց լիդերության դպրոց» Վանաձոր քաղաքում, որին մասնակցել են մարզի 30 համայնքների 35 կանայք, 5.2 Կազմակերպվել են Վանաձոր, Ալավերդի, Ստեփանավան, Սպիտակ, Տաշիր քաղաքներում, Թեղուտ համայնքում 2-օրյա սեմինար-պարապմունքներ 5.3 Կազմակերպվել են իրազեկման հանդիպումներ 17 գյուղական համայնքներում, որոնց արդյունքում բարձրացել է մարզային ենթակայության կազմակերպությունների, տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների մոտ կանանց և տղամարդկանց իրավահավասարության քաղաքականության վերաբերյալ իրազեկման մակարդակը, ինչպես նաև նրանց գենդերային զգայնությունը: Լոռու մարզի ՏԻՄ ընտրությունների արդյունքում ընտրվել են 4 կին գյուղապետ, ավագանու 98 կին անդամներ:	Լոռու մարզետարան, դրամաշնորհային ծրագրեր

6.	Կազմակերպվել են «Ընտրական օրենսգրքի փոփոխությունները որպես որոշումների կայացման մակարդակներում կանանց անհրաժեշտ ներկայացվածության ապահովմանը նպաստող գործոն» 5 կլոր սեղան-քննարկումներ տարածաշրջանային կենտրոններում	Մշակվել են առաջարկությունների փաթեթ ընտրական օրենսգրքի փոփոխությունների համատեքստում՝ որոշումների կայացման բոլոր մակարդակներում կանանց ներկայացվածության բարձրացման համար:	Դրամաշնորհային ծրագրեր
7.	Կազմակերպվել է կանանց լիդերության դպրոց Վանաձորի հանրակրթական դպրոցների հասարակագիտության 30 ուսուցիչների համար	Բարձրացվել է գենդերային գիտելիքների մակարդակը Վանաձորի հանրակրթական դպրոցների հասարակագիտության 30 ուսուցիչների մոտ	Լոռու մարզետարան, Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա
8.	Կազմակերպվել են իրազեկման հանդիպումներ մարզի 15 համայնքներում «Պտղի սեռի խտրական ընտրության դեմ պայքար» ծրագրի շրջանակներում	Բարձրացվել է 15 համայնքի շուրջ 300 բնակիչների իրազեկվածության մակարդակը պտղի սեռի խտրական ընտրության հիմնախնդրի շուրջ:	Լոռու մարզետարան, «Առավոտ» ԲՀԿ, համայնքապետարաններ, դրամաշնորհային ծրագիր

Ընտանիքի, կանանց եւ երեխաների

իրավունքների պաշտպանության բաժնի պետ

Ս. Խեչումյան